1812 Թ. ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՆԿԱՐԾԱԿԻՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱԾԸ

ՄԱԼԽԱՍՅԱՆ Հ. Թ., ՀԱԿՈԲՅԱՆ Ս. Ս.

Ռուսաստանի պատմության մյուս իրադարձությունների համեմատությամբ, 1812 թ. պատերազմն առավել մեծ չափով է դարձել ուսումնասիրության առարկա: Բուն պատերազմի վերաբերյալ գրվել են ավելի քան 15 հազ. անուն գրքեր և հոդվածներ՝ չհաշված Նապոլեոնին նվիրված համաշխարհային գրականության բազմաթիվ գործերը, որոնց թիվն արդեն հասնում է շուրջ կես միլիոնի[1]: «1812 թվականը» հանգամանորեն քննության է առնվել խորհրդային պատմաբանների կողմից: Վերջիններս, չնայած նրանց մեծագույն ծառայությանը, պատերազմի հետ կապված հիմնահարցերն ուսումնասիրել են գաղափարախոսական կարծր շրջանակներում՝ տեղիք տալով բավականին լուրջ մեղանչումների և մի շարք վիճահարույց խնդիրների: Պատերազմին անդրադարձել են նաև արտերկրի պատմագիտության ներկայացուցիչները. առավել անկողմնակալ են Ժ. Շամբրեի, Ժ. Տիրի (Ֆրանսիա), Կ. Կլաուզևիցի (Գերմանիա), Դ. Չենդլերի (Անգլիա) աշխատությունները: Ռուսական պատմագիտության մեջ հայրենական պատերազմի նորովի մեկնաբանությունները սկզբնավորվել են դեռևս 20-րդ դարի 80-ական թթ. վերջերից, հետագա զարգացում ստացել 1990-ական թվականներին և շարունակվում են առ այսօր: Հրատարակվել են բազմաբնույթ ուսումնասիրություններ, որոնք վերաբերում են բուն պատերազմին և նրա պատմագրությանը[2], հուշագրություններ, գաղտնի գրագրու-թյուններ, անձնական նամակներ, գրառումներ, օրագրեր[3], պատերազմի առանձին նշանա-

---

[1] **Троицкий Н. А.**, *История России XIX в., курс лекций, М., 1999, с. 52-53.*

[2] **Абалихин Б. С.**, **Дунаевский В. А.,** *1812 год на перекрестках мнений советских историков 1917-1987, М., 1990;* **Верещагин В.** *Наполеон I в России 1812 г., Тверь, 1993;* **Захарова О. Ю.,** *Генерал-фельдмаршал Светлейший князь М. С. Воронцов, М., 2001, с. 61-112;* **Земцов В. Н.,** *Битва при Москве реке. Армия Наполеона в Бородинском сражении, М., 1999. Москва в 1812 году. Материалы науч. конф. посвящен. 180-летию Отечественной войны 1812 года, М., 1997; Отечественная война 1812 г. Источники, памятники, проблемы: материалы научных конференций, Бородино, 1992-2000;* **Попов А. И.,** *Бородинское сражение: боевые действия на северном фланге, Самара, 1995;* **Сироткин В.**, *Наполеон и Россия, М., 2000;* **Тарле Е. В.,** *Нашествие Наполеона на Россию в 1812 г., М., 1992;* **его же**, *1812 г., М., 1994;* **Троицкий Н. А.,** *1812. Великий год России, М., 1988; его же, Отечественная война 1812 года: история темы, Саратов, 1991 и др.*

[3] *Бородино в воспоминаниях современников, М., 2001, 1812 год: воспоминания воинов русской армии: из собрания отдела письменных источников Гос. Ист. Музея, М., 1991. 1812 год в воспоминаниях* современников, М., 1995; *1812 год в воспоминаниях, переписке и рассказах современников, М., 2001; Записки Бенкендорфа. 1812 год. Отечественная война, М., 2001; Записки А. П. Ермолова 1798-1826, М., 1991, с. 112-267; Россия первой половины XIX в. глазами иностранцев, М., 1991, с. 65-421. 1812-1814: секретная переписка генерала Л. И. Багратиона, личные письма генерала Н. Н. Раевского, записки генерала М. С. Воронцова, дневники офицеров*

վոր զորահրամանատարներին նվիրված գործեր[4]: Զգալի տեղ է հատկացվել արտերկրի հեղինակների աշխատությունների թարգմանություններին և եղածների նոր վերահրատարակություններին[5]:

Ցավոք, տասնամյակներ շարունակ պատմությունը կեղծվել է, նույնիսկ նրա շատ էջեր հանիրավի դուրս են նետվել և մոռացության մատնվել: Ներկա փուլում այդ թերություններն աստիճանաբար հաղթահարվում են: Պատմությունը սկսում է բնակեցվել ռեալ մարդկանցով, բազմաթիվ իրադարձություններ քննվում են նոր տեսանկյունից, որոնք դեռևս հայեցակարգային նշանակություն չունեն:

Ավանդապաշտության և սեփական ինքնասիրահարվածության հաղթահարումը, որը կարող է ուղի հարթել նոր զարգացումների համար, բոլոր ժամանակներում էլ դժվարությունների հետ է կապված:

Հոդվածում նպատակ ունենք նոր հրապարակումների հիմամբ, ներկայացնելով 1812 թ. հայրենական պատերազմի որոշ հիմնահարցերի նորովի մեկնաբանությունները, կարևորելով պատերազմի «հայրենական» անվանումը, Ռուսաստանի՝ Եվրոպայի կոլեկտիվ անվտանգության ջատագով լինելը, պատերազմի հանկարծակիության և դրան Ռուսաստանի պատրաստ չլինելու վարկածը:

Ազնվականական պատմագիտության՝ «գահի շուրջ դասերի համախմբման» գաղափարը պատմական մի շարք երևույթների մեկնաբանման համար ելակետային նշանակություն է ունեցել: Ա. Միխայլովսկի-Դանիլևսկուց սկսած, որի հեղինակած «1812 թ. հայրենական պատերազմի նկարագրությունը» աշխատու-

---

Русской армии. Из собр. Гос.ист.музея, М., 1992; **Тартаковский А. Г.,** *Русская мемуаристика: XYIII-первой половины XIX в. От рукописи к книге, М., 1991 и др.*

[4] **Балязин В. Н.,** *Михаил Кутузов, М., 1991;* **Безотносный В. М.**, *Донской генералитет и атаман Платов в 1812 году: малоизвестные и неизвестные факты на фоне знаменитых событий, М., 1999; Михаил Илларионович Кутузов, М., 1995;* **Тартаковский А. Г.,** *Неразгаданный Барклай: легенды и быль 1812 г., М., 1996.* **Тотфалушин В. П.,** *Барклай де Толли в Отечественной войне, М., 1991;* **Троицкий Н. А.**, *Фельдмаршал М. И. Кутузов: легенда и реальность, Саратов, 1998;* **его же,** *Фельдмаршал Кутузов: мифы и факты, М., 2001;* **Юлин В. А.,** *Адмирал Павел Васильевич Чичагов (Вопросы истории, 2003, N2, с. 50-70).*

[5] **Вандаль А.,** *Наполеон и Александр I (пер. с фр., т. I-4., Ростов н/Д.,1995.* **Вейдер Б.,** *Триумф и загадочная смерть Наполеона, М., 2000.* **Вейдер Б., Хепгуд Д.,** *Кто убил Наполеона (пер. с фр.), М, 1999;* **Вернет Г.,** *История Наполеона, М., 1997;* **Вильсон Р. Т.,** *Дневник путешествий, службы и общественных событий в бытность при европейских армиях во время кампаний 1812-1813 года. Письма к разным лицам (пер. с англ.) СПб., 1995;* **Дельдерфильд Р. Ф.**, *Крушение империи Наполеона. Военные исторические хроники(пер. с англ.), М., 2001;* **Коленкур А.,** *Поход Наполеона на Россию: мемуары, Смоленск, 1991; Максимы и мысли узника Святой Елены: рукопись, найденная в бумагах Лас Каза, СПб., 1995; Наполеон. Воспоминания и военно-исторические произведения, СПб., 1994; Наполеон. Годы величия.1800-1814: в воспоминаниях секретаря Меневаля и камердинера Констана, М., 2001;* **Солон В.,** *Новое жизнеописание Наполеона I., М., 1997;* **Тюлар Ж.,** *Мюрат, или пробуждение нации, М., 1993;* **его же,** *Наполеон, или ,,миф о спасителе", М., 1996;* **Чендлер,** *Военные кампании Наполеона. Триумф и трагедия завоевателя, М., 2000.*

թյունը[6] գրվել է Նիկոլայ I-ի հանձնարարականով և անմիջականորեն խմբագրվել է նրա կողմից, այդ ժամանակից ի վեր ռուսական գրականության մեջ պատերազմը սկսեցին անվանել «հայրենական»: Պատերազմի ընթացքը լուսաբանվում էր ջատագովական-հայրենասիրական ոգով, ֆրանսիականի հանդեպ ռուսական ամեն ինչի փառաբանմամբ, իսկ պատերազմի պատճառները դիտարկվում էին սոսկ Նապոլեոնի տիրակալական ձգտումներով և «նվաճումների հանդեպ նրա ագահությամբ»:

Խորհրդային պատմաբանները 1920-1930-ական թվականներին Մ. Պոկրովսկու նախաձեռնությամբ հրաժարվեցին պատերազմի վերաբերյալ պաշտոնական պատմագիտության ջատագովական հայրենասիրությունից, և գիտական շրջանառությունից հանվեց «հայրենական» անվանումը, սակայն 1930-ական թթ. վերջերին նորից նրանք վերադարձան այդ բնութագրմանը, ինչպես նաև պատերազմի ընթացքի կանխակալ լուսաբանմանը: Նորից վերընտրվեց պատերազմի պատճառների մեկնաբանման ազնվականական մեկնակերպը. Նապոլեոնը համաշխարհային տիրակալության իր ձգտմամբ և ագահությամբ ջանում էր ստրկացնել Ռուսաստանը, իսկ վերջինս խաղաղասիրությամբ ցանկանում էր իրեն և մյուս երկրներին պաշտպանել ֆրանսիական ագրեսիայից: Ռուսական կողմի բոլոր մտահղացումները և գործողություններն արդարացվում, իսկ ֆրանսիացիների անհաջողություններն ուռճացվում էին: Կողմերի միջև ուժերի հարաբերակցության և կորուստների վերաբերյալ տվյալները հաշվարկվում էին այնպես, որպեսզի ներկայացվեն ռուսների օգտին[7]:

Խորհրդային պատմագիտությունը, առաջնորդվելով դասակարգային պայքարի ուղղորդող հիմնադրույթով, ժխտում էր «դասերի համախմբման» վերաբերյալ դրույթը: Պատերազմի «հայրենական» անվանումը բացատրում էին ժողովրդի մասնակցությամբ, որն իրագործվել է պարտիզանական և աշխարհազորային շարժմամբ: Հետևաբար, գրում է Ն. Տրոիցկին, «նման հատկանիշով այն բոլոր պատերազմները, որ Ռուսաստանը, սկսած XIII դարից, վարել է սեփական տարածքներում, պետք է անվանել «հայրենական», այնուհետև շարունակելով միտքը, նա նշում է, որ «ԽՍՀՄ (ԱՊՀ) պատմաբանները այդպես չեն վարվում[8]», ինչը բոլորովին չի համապատասխանում իրականությանը: Արդի ռուսական պատմագիտության մեջ նա միակն է, որ քննադատական, ժխտողական վերաբերմունք ունի պատերազմի «հայրենական» անվանման վերաբերյալ, և որը գիտականորեն չի հիմնավորվում: Խորհրդային պատմաբաններից միայն քչերն են, այն էլ ոչ բոլոր ուսումնասիրություններում, 1812 թ. պատերազմը համեմատաբար

---

[6] **Михайловский-Данилевский А. И.,** *Описание Отечественной войны в 1812 г., ч. I-4, СПб., 1839.*

[7] **Троицкий Н. А.,** *Отечественная война 1812 г., история темы, Саратов, 1991, с. 50, 58-62, 68, 69, 80-87, 92-93.*

[8] **Троицкий Н. А.,** *նշվ. աշխ., էջ 53.*

ճշմարտացի, գիտական լուսաբանել: Այդ առումով աչքի են ընկել Վ. Պուգաչովի, Ա. Տարտակովսկու, Ա. Կոչետկովի, Վ. Տոտֆալուշինի ուսումնասիրությունները և Ե. Տարլեի ընդհանրացնող մենագրությունը, որտեղ համոզիչ բացահայտված են պատերազմի պատճառները, նրա ժողովրդական բնույթը, ռազմական գործողությունների ընթացքը, դրանց սոցիալ-տնտեսական և քաղաքական դրդապատճառները, մտահղացումները, գործողությունները և գործող հիմնական անձերի անհատական որակները: Ե. Տարլեի ուսումնասիրությունը դասական գիտական աշխատություն է՝ մինչև այժմ մնալով 1812 թ. պատերազմի մասին ռուսական պատմագիտության լավագույն գործը[9]:

Դեմ չլինելով պատերազմի «հայրենական» անվանմանը՝ անհրաժեշտ է առավել հստակեցնել նման մեկնաբանության ազգային ակունքները և հիմնական չափորոշիչները: Եթե «հայրենական» անվանման մեկնաբանությունը դնենք պատերազմի հետ կապված «ազգային ոգու» վերածնության հարթության վրա, ապա իրավացի է Կ. Մարքսը, որ, ընդգծելով Հայրենական պատերազմին բնորոշ «վերածնության ոգին», միաժամանակ, ելնելով այդ պատերազմում ցարիզմի հետապնդած նպատակներից և շահերից, զուգահեռաբար նշել է այդ պատերազմին բնորոշ «հետադիմական ոգին»[10]: Կ. Մարքսի բնութագրմամբ, Հայրենական պատերազմի ավարտից հետո «հետադիմական ոգին» տիրապետող է դառնում «ազգային ոգու» վերածնության նկատմամբ: Մեր կարծիքով, անկախ ժամանակային գործոնից, այդպիսի մեկնաբանության համար որոշիչ դեր կարող են ունենալ ռուս ազգի հոգեկերտվածքի, ազգային ինքնության հատկանիշները, որոնք հնարավորություն են ընձեռում պատմական ճակատագրական պահերին ժողովրդին-ազգին համախմբել որոշակի գաղափարների շուրջ, ուստի այն ազգային հոգեկերտվածքի վրա խարսխված քաղաքական կարգախոսի նշանակություն է ձեռք բերում[11]: Չնայած այդ ուղղությամբ հետազոտությունները կոնկրետ հարցադրմանը չեն վերաբերում, սակայն կարծում ենք, որ հետագայում դրանք կդառնան միջոց նաև այս հիմնահարցի լուսաբանման համար: Այդպես է եղել 1812 թ., այդպես է եղել նաև Հայրենական մեծ պատերազմի տարիներին՝ անկախ այն բանից, թե ազգային համախմբումը տեղի կունենա գահի, թե կոմունիստական գաղափարախոսության շուրջ: Աշխարհի բոլոր ազգերն էլ առաջնորդվում են ազգային անկախության գաղափարներով, սակայն պատերազմների «հայրենական» անվանումը միայն ռուսներին է բնութագրական: Առ այսօր, ռուսական պատմագրության մեջ «հայրենական» անվանման չափորոշիչների խնդիրն ամբողջական ու համակողմանի քննության չի առնվել: Ինքնին

---

[9] ***Տարլե Ե. Վ.,*** Նապոլեոնի արշավանքը Ռուսաստան 1812 թ., Ե., 1939: Գիրքը 1938 թ. ռուսերեն հրատարակումից հետո բազմիցս վերահրատարակվել է, վերջին անգամ՝ 1992 թ.:

[10] **Маркс К. и Энгельс Ф.,** *Собр. соч., т. 10, М., 1958, с. 436.*

[11] **Жидков В. С., Соколов К. Б.,** *Десять веков российской ментальности: картина мира и власть, СПб., 2001;* **Гудзенко А.,** *Русский менталитет, М., 2001 и др.*

հասկանալի է, որ վերոնշյալ հարցադրումը սոսկ պատմագիտության խնդիր չէ: Այդ առումով բավական լուրջ անելիքներ ունեն նաև գիտական մի շարք ուղղություններ՝ էթնոհոգեբանությունը, էթնոսոցիոլոգիան, փիլիսոփայությունը, մարդաբանությունը և այլն:

Խորհրդային պատմագիտության մեջ XIX դ. սկզբի ռուսական դիվանագիտությունը հռչակվել է Եվրոպայի կոլեկտիվ անվտանգության ջատագով և պաշտպան: Ռուսաստանը ներկայացվել է Նապոլեոնի զավթողական մտադրությունների զոհ, որով և խեղաթյուրվել է Ռուսաստանի (1805-1812 թթ.) արտաքին քաղաքականության ուղղվածությունը: Այնինչ, արխիվային փաստաթղթերը վկայում են, որ Ռուսաստանը ձգտում էր զավթել Լեհաստանը, Ֆինլանդիան, Թուրքիան, շուրջ 300-ի հասնող, ցրված գերմանական իշխանությունները: Լեհաստանը և Ֆինլանդիան շուտով կուլ գնացին Ռուսաստանին, մինչև 1917 թ. նրան գայթակղում էր Կ. Պոլսի և նեղուցների ուրվականը[12]: Եկատերինյան ժամանակաշրջանից հետո ցարիզմը երբևէ այդքան ռազմաշունչ չի եղել, որքան XIX դ. սկզբին: «Շատ պատմաբաններ,- իրավացիորեն գրում է Ն. Ա. Տրոիցկին,- Նապոլեոնի դեմ մղված բոլոր պատերազմները ներկայացնում են արդարացի, իսկ 1805-1807 թթ. ֆեոդալական կոալիցիաները բնութագրում են որպես «եվրոպական պետությունների պաշտպանողական դաշինքներ»… և ձգտում են համարյա թե «Եվրոպայում կոլեկտիվ անվտանգության համակարգի ստեղծմանը»[13]: Նման մոտեցումը բնութագրական է ցարական պաշտոնական և խորհրդային պատմագիտությանը, որը միակողմանի է և անհարիր ճշմարտությանը: Այդ պատերազմների բնույթը պայմանավորված էր նրանց առջև դրված խնդիրներով. նվազագույնը՝ տարածքային ընդլայնում և նոր հողերի զավթում, Եվրոպայում պահպանել ֆեոդալական վարչակարգերը և վերականգնել տապալվածները, առավելագույնը՝ մեծ տերություններից յուրաքանչյուրը (Ֆրանսիա, Անգլիա, Ռուսաստան, Ավստրիա, Պրուսիա) ձգտում էր Եվրոպայում գերիշխանության հաստատմանը, բոլոր պատերազմների ժամանակ կոալիցիաների մասնակիցները պայքարում էին ոչ թե եվրոպական ժողովուրդների «ազատության» և «անվընտանգության», այլ նրանց նկատմամբ գերակայության համար: Ցավոք, նման մեկնաբանությունները շարունակում են տիրապետել նաև արդի ռուսական պատմագիտության մեջ:

Այս բոլորը անվիճելի է: Եվրոպայի բաժանման Ռուսաստանի քաղաքականությունը ոչ մի ընդհանուր բան չուներ Եվրոպայի կոլեկտիվ անվտանգության համակարգի ստեղծման հետ: 1811-1812 թթ. այդ ուղղությամբ Ռուսաստանի ձեռնարկումներն էլ ավելի ակտիվ բնույթ կրեցին: 1812 թ. պատերազմը բուրժուական Ֆրանսիայի և ֆեոդալական Ռուսաստանի միջև լուրջ հակասությունների արդյունք էին: Տիլզիտի հաշտության պայմանագրից (1807 թ. հունիսի 26) հետո Ռուսաստանը հայտնի պատճառներով հրաժարվել էր

---

[12] **Троицкий Н. А.,** *1812. Великий год России, М., 1988, с. 39.*

[13] Նույն տեղում, էջ 17:

մասնակցել ցամաքային պաշարմանը, որը չէր համապատասխանում Ռուսաստանի շահերին: Բախման կիզակետը Նապոլեոնի համաշխարհային տիրակալության ձգտումն էր, մինչդեռ Ռուսաստանն էլ դեմ չէր իր գերիշխանությունը հաստատել Եվրոպայում: «Մեր որոշ պատմաբաններ,- գրում է Ն. Տրոիցկին,- երբ պնդում են, որ Նապոլեոնը իբր թե ցանկանում էր «զավթել» Ռուսաստանը և «ռուս ժողովրդին վերածել ստրուկների», իրականությանը չի համապատասխանում: Նապոլեոնը, իհարկե, իր առջև այդքան անիրականանալի խնդիրներ չի դրել: Ֆրանսիական կայսրը (համոզիչ ապացուցել են Ե. Վ. Տարլեն և Ա. Զ. Մանֆրեդը) մտածում էր միայն «պատժել» Ռուսաստանին՝ Տիլզիտի պայմանագիրը չկատարելու համար, ինչպես նաև Ալեքսանդր I-ի վզին փաթաթել կրտսեր խաղընկերոջ դեր: Ահա թե ինչու, նա գրված տարածքներում չվերացրեց ճորտատիրական իրավունքը, Ռուսաստանի դեմ չհանեց ոչ ռուս ժողովուրդներին, նա ձգտում էր իր համար շահավետ պայմանագիր կնքել Ալեքսանդր I-ի հետ: Այնուամենայնիվ, այդ պատերազմը լուրջ վտանգ էր սպառնում Ռուսաստանի ինքնությանը, ուստի պատերազմը հենց սկզբից ձեռք բերեց ժողովրդական, ազգային ազատագրական բնույթ»[14]:

Արդյո՞ք Ռուսաստանը միմիայն նապոլեոնյան ագրեսիայի թիրախը և զոհն էր, ինչպես իրադարձությունները մեկնաբանվում էին խորհրդային պատմագիտության կողմից: Փաստերը բոլորովին այլ իրողություններ են վկայում: Ցարական Ռուսաստանն ինքն էր ձգտում եթե ոչ համաշխարհային, ապա եվրոպական տիրակալության և այդ ուղղությամբ մեծ ջանքեր թափեց 1799-1807 թթ. կոալիցիոն պատերազմներում: Տանուլ տալով այդ պատերազմներում՝ Ալեքսանդր I-ը Նապոլեոնի հետ կնքեց իր համար ստորացուցիչ Տիլզիտի հաշտության պայմանագիրը՝ երբեք չհրաժարվելով փոխհատուցման մտքից: Այդ է վկայում 1808 թ. սեպտեմբերին Ալեքսանդր I-ի կողմից մորը՝ կայսրուհի Մարիա Ֆեոդորովնային հղված նամակը, որտեղ նշում է, որ ինքը «այդ սարսափելի հսկայի, թշնամու» հետ երևութական դաշինքով քողարկում է Ռուսաստանի համար ուժերի հարաբերակցության առավել շահավետ պայմաններում նոր պայքարի նախապատրաստումը[15]:

1812 թ. առաջ Ռուսաստանը պատրաստվում էր պարզապես ոչ միայն պաշտպանողական պատերազմի, ինչպես գտնում էին Պ. Ժիլինը կամ Լ. Բեսկրովնին, այլև Նապոլեոնի դեմ հարձակողական գործողությունների: 1811 թ. աշնանը Ալեքսանդր I-ը Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխ Վիլհելմ III-ի հետ ունեցած գաղտնի պայմանավորվածությամբ որոշել էր կանխարգելիչ հարված հասցնել Նապոլեոնին: Այդ իսկ պատճառով արևմտյան սահմանի հինգ կորպուսների հրամանատարներին (Պ. Բագրատիոն, Դ. Դոխտուրով, Պ. Վիտգենշտեյն, Ի. Էսսեն և Կ. Բոգգովուտ) ավելի վաղ Վիսլա հասնելու համար, քան

[14] Троицкий Н. А., *История России XIX в., с. 32-33.*
[15] *Русская старина, 1899, N 4, с.17-24.*

ֆրանսիացիները, հոկտեմբերի 24, 27 և 29-ին հրահանգվեց նախապատրաստվել արշավանքի: Վերջին պահին պրուսական թագավորի ուխտազանցությունը Ալեքսանդր I-ին խանգարեց նախահարձակ լինելու[16]:

Ալեքսանդր I-ի «կանխարգելիչ հարվածի» գաղափարը ձևավորվել է դեռևս 1811 թ. սկզբներին: Այդ ժամանակ ռազմական մի շարք գործիչներ, ինչպիսիք էին հերցոգ Ա. Վյուրտենբերգցին, իշխան Պ. Բագրատիոնը և Լ. Բենիգսենը, ցարին ներկայացրին Վարշավայի և Դանցիգի վրա հարձակման պլաններ: Ալեքսանդր I-ի 1811 թ. հունվարի 6-ի թվագրությամբ Ա. Չարտորիյսկուն հղված նամակներն ինքնին վկայում են, որ ցարը նպատակադրվել էր պատերազմ սանձազերծել, զավթել և Ռուսաստանին միացնել Լեհաստանը: Այդ նույն թվականի փետրվարի 25-ին Ավստրիայի ռուսական դեսպանորդ Գ. Շտակելբերգին տրված հրահանգում Ալեքսանդր I-ը ընդգծում է, որ Ռուսաստանը «անհապաղ պետք է գրավի» Լեհաստանը և, որպեսզի Ավստրիան չխանգարի, առաջարկում էր նրան զիջել Մոլդովան և Վալախիան: Այդ պլանը ձախողվեց, քանզի լեհ ազգայնականների առաջնորդ իշխան Յու. Պոնյատովսկին, որին Ա. Չարտորիյսկին փորձում էր ներգրավել Ռուսաստանի կողմը, Նապոլեոնին տեղեկացրեց այդ ուղղությամբ Ռուսաստանի նախապատրաստությունների մասին[17]:

Խորհրդային պատմագիտության վերոհիշյալ իրողությունները լռության մատնելուց և 1811 թ. հունվարի 6-ի թվագրությամբ Ալեքսանդր I-ի նամակները, փետրվարի 25-ին թվագրված հրահանգը և նույն թվականի հոկտեմբերի 24-29-ը հինգ գեներալներին հղված կարգադրությունները զանց առնելուց բոլորովին չի հետևում, որ դրանք դադարել են գոյություն ունենալուց, առավել ևս, որ այդ փաստաթղթերը վաղուց շրջանառության մեջ են դրվել արևմտյան պատմագրության կողմից[18]: Վերոհիշյալ դիտանկյունից ճշմարտությանն անհարիր է Մ. Պոկրովսկու տեսակետը, ըստ որի, Ա. Չարտորիյսկու հետ Ալեքսանդր I-ի նամակագրության հրապարակումից հետո «լիովին անհնար է խոսել Ռուսաստանի դեմ Նապոլեոնի արշավանքի մասին. այն ըստ էության եղել է «անհրաժեշտ ինքնապաշտպանության ակտ»[19]:

Անշուշտ, եթե ցարիզմը 1811 թ. պատերազմ սանձազերծեր, այնժամ հնարավոր չէր լինի խոսել Նապոլեոնի արշավանքի մասին, սակայն իրադարձությունները այլ կերպ զարգացան:

Մինչ 1812թ. պատերազմը առկա ռազմական պլաններից առավել ուշագրավը 1812թ. ապրիլին Պ. Չիչագովի մշակած և Ալեքսանդր I-ի հաստատմանը ներկայացված ռազմավարական նախագիծն էր: 1812 թ. ապրիլին Պ. Չիչագովը Դանուբյան բանակի հրամանատարի պաշտոնում փոխարինում է Մ. Կուտու-

---

[16] **Троицкий Н. А.,** *1812. Великий год России, с.42.*

[17] *Նույն տեղում:*

[18] Նույն տեղում, էջ 42:

[19] **Покровский М. Н.,** *Избр. произв., кн.2, М., 1965, с.218;* **его же**, *Дипломатия, царские войны в XIX веке, М., 1923, с. 139.*

զովին, ցարը վերջինիս պաշտոնաթող է անում: Այդ փոխարինումը նախապատրաստվում էր գաղտնի: Արևմուտքից նապոլեոնյան ներխուժման վտանգի առկայության պայմաններում, Ալեքսանդր I-ը որոշում է ամրապնդել Ռուսաստանի դիրքերը հարավում՝ Դանուբյան բանակի և Սևծովյան նավատորմի միասնական հրամանատարությունը հանձնելով ծովակալ Պ. Չիչագովին: Նրա իրավասության ներքո էր նաև Դանուբյան իշխանությունների գլխավոր վարչության տնօրինումը: Նման մտահղացմամբ ցարը հեռագնա նպատակ էր հետապնդում Բալկանների և Թուրքիայի սլավոնական ժողովուրդների աջակցությամբ, «շրջանցիկ զորաշարժի» միջոցով հարվածել Ֆրանսիային: Կուտուզովին հաջողվեց վաղօրոք իմանալ այդ մասին, և նա հապճեպ ձեռնամուխ եղավ ռուս-թուրքական հաշտության պայմանագրի կնքմանը, որպեսզի հաղթության դափնիները վերագրվեն իրեն, այլ ոչ թե Չիչագովին: Կուտուզովի կողմից Բուխարեստի պայմանագրով խախտվեց պայմանագրի կնքման գլխավոր նախապայմանը՝ հասնել Ֆրանսիայի և նրա դաշնակիցների դեմ Թուրքիայի հետ «հարձակողական և պաշտպանողական դաշինքի» կնքմանը: Նման դաշինքով Ալեքսանդր I-ը ձեռք կբերեր սերբերի, բոսնիացիների և քրիստոնյա մյուս ժողովուրդների աշխարհազորայինների աջակցությունը և ամրապնդելով Դանուբյան բանակը՝ ձեռնամուխ կլիներ Ֆրանսիայի հարավում □այլաշեղ, խաբուսիկ» հարված հասցնելուն: Թուրքիայի մերժման դեպքում հնարավոր էր համարվում ռազմական գործողությունների վերսկսումը, որպեսզի ստիպեն նրան կնքելու այդպիսի դաշինք[20]:

Նապոլեոնի ներխուժումը Ռուսաստան կանխելու համար ռազմական դիտանկյունից առավել գործնական նշանակություն ուներ Չիչագովի նախագիծը: Ստանձնելով Դանուբյան բանակի հրամանատարի պաշտոնը՝ նա ձեռնամուխ եղավ Թուրքիայի հետ դաշինքի կնքման գաղափարի իրագործմանը: Չիչագովը հանդես եկավ ռազմավարական նոր նախագծով, որի հիմքում բոլորովին այլ պայմաններով, նորից դրված էր «այլաշեղ, խաբուսիկ» հարվածի գաղափարը: Այդ նկատառումով նա կապեր հաստատեց թուրքական մի շարք փաշաների հետ, որպեսզի վերջիններս հրաժարվեն զինված դիմադրությունից և թույլ տան ռուսական զորքերի անցումը իրենց վերահսկած տարածքներով: Թուրքերի անհամաձայնության դեպքում նա պատրաստ էր արագացված երթով անցնել Դանուբը, գրոհել նրանց վրա և շարժվել դեպի Կ. Պոլիս: Միաժամանակ, սևծովյան նավատորմը պետք է դեսանտային ուժերի ափհանում կատարեր Կ. Պոլսում: Նրա կարծիքով, դեպի Կ. Պոլիս արշավանքը հնարավոր կդարձներ այդ տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության ընդլայնումը և կարող էր շփոթ առաջացնել Նապոլեոնի դաշնակիցների միջև, կանխել նրա ներխուժումը ռուսական տարածքների խորքը: Չիչագովի նախագիծն ի վիճակի էր ոչ միայն չեզոքացնել, այլև կանխել Նապոլեոնի ռազմավարական մտահղացումները և գերազանցել դրանք:

[20] **Юлин В. А.**, *Адмирал Павел Васильевич Чичагов (Вопросы истории, 2003, N 2, с. 57-58).*

Նա չէր կասկածում, որ Ալեքսանդր I-ը «այլաշեղ, խաբուսիկ» հարվածի իր պլանը հավանության կարժանացնի: Ռազմավարական այդ պլանի համաձայն, Դանուբյան բանակի առաջապահ ուժերը, որոնց թիվը հասնում էր շուրջ 20 հազարի, գեներալ-մայոր, կոմս Օրուրկայի հրամանատարությամբ, դուրս գալով Վալախիայից ու Սերբիայից և անցնելով Դանուբը, ռազմական գործողություններ պետք է ծավալեին Թուրքիայի դեմ: Դանուբյան բանակի մնացած մասը բաժանելով 5 կորպուսների՝ նա նպատակ ուներ թևային հարված հասցնել Տորմասովի 3-րդ բանակին դիմակայող ավստրիական զորքերին: Նախատեսվում էր մեկ այլ զորախումբ տեղակայել Դանուբում՝ ամրոցների պաշտպանության և թուրքական սահմանի վերահսկման համար[21]:

Սակայն Ալեքսանդր I-ը չպաշտպանեց ծովակալի ռազմավարական պլանը: Նա ավելի շատ մտահոգված էր Ռուսաստանի սահմանները Նապոլեոնի ներխուժմամբ: Նա ծովակալին հղած նամակում գրում է. «Ձեր պլանը չափազանց ընդարձակ է և շատ համարձակ, բայց ո՞վ կարող է երաշխավորել դրա հաջողությունը: Այլապես, արդյունքների սպասելով՝ մենք զրկվում ենք այն ներգործությունից, որը մեր «այլաշեղ, խաբուսիկ» հարվածը կարող է ունենալ հակառակորդի վրա, ինչպես նաև երկար ժամանակով կորցնում ենք ձեր հրամանատարության տակ գտնվող զորքերի տնօրինման հնարավորությունը, որոնք պետք է ուղարկվեն Կ. Պոլիս: Չխոսելով արդեն այն ընդհանուր տհաճ տպավորության մասին, որ նման որոշումը կարող է առաջացնել մեր հայրենակիցների և դաշնակիցների՝ անգլիացիների և շվեդների մեջ, մի՞թե դա չի ավելացնում տարակուսանքների պատճառները»[22]: Այսպիսով, նոր շրջանառվող փաստերի լուսաբանումը հավաստում է, որ Ռուսաստանը 1811 թ. հունվարից մինչև 1812 թ. ապրիլը լուրջ նախապատրաստություններ է կատարել նապոլեոնյան Ֆրանսիայի դեմ նախահարձակ լինելու ուղղությամբ: Պատմական գործընթացի և նույնիսկ նրա առանձին դրվագների նկատմամբ թեական մոտեցումը պատմականությանն անհարիր, անշնորհակալ գործ է: Այնուամենայնիվ, պատերազմի նախօրյակին Ռուսաստանի վերոհիշյալ ռազմավարական նախագծումները բավական իրատեսական տարրեր են պարունակում, որը գուցե իրադարձություններին այլ ընթացք հաղորդեր, ընդհուպ մինչև պատերազմի կանխումը: Նապոլեոնը, պատրաստվելով Ռուսաստանի դեմ պատերազմի, գիտակցում էր, որ այն կլինի ամենադժվարինը, իր վարած պատերազմներից ամենավտանգավորը: Պատահական չէ, որ գործող բանակ մեկնելուց առաջ նա իր ոստիկանության նախարար, Ռուսաստանի նախկին դեսպան Ռ. Սավարին խոստովանել է. «Նա, ով կազատի ինձ այս պատերազմից, մեծ ծառայություն մատուցած կլինի ինձ»[23]:

---

[21] **Михайловский-Данилевский А. И.,** *Отечественная война. Описание войны 1812-1815 гг., СПб., 1899, с. 106-107;* **Юлин В. А.,** *նշվ. հոդվ.,էջ 58, Россия. История XIX века, М., 1998, с. 129.*

[22] *Русский архив, 1870, N 9, с. 41.*

[23] **Троицкий Н. А.,** *1812. Великий год России, с. 35.*

1810 թվականից ռազմական նախարար Մ. Բարկլայ դե Տոլլիի ջանքերի շնորհիվ 1812 թ. ռուսական զորքերի թվաքանակը հասցվեց 975 հազարի, իսկ 1811թ. վերջերին ողջ Եվրոպայում ֆրանսիական բանակի ընդհանուր թվաքանակը (առանց լեհական միավորումների) կազմում էր շուրջ 1 մլն. (986, 5 հազ.) մարդ[24]: Ռուսական հետախուզությունը մանրամասն տեղեկություններ ուներ հակառակորդի պլանների և նպատակների մասին: Փարիզում ռուսական լիազոր ներկայացուցիչ Ա. Չերնիշևը, կաշառելով ֆրանսիական ռազմական նախարարության գրագրին, ավելի վաղ էր ստանում գաղտնի ռազմական փաստաթղթերի ընդօրինակումները, քան Նապոլեոնը՝ դրանց բնօրինակը: Ռուսաստանի վարձու գործակալն էր իշխան Շ. Թալեյրանը (Կուզեն Անրի և Աննա Իվանովնա կեղծանուններով), որը հետագայում դարձավ Ֆրանսիայի արտաքին գործոց նախարար:

Ֆրանսիական արշավանքի պահին ռուսական դիվանագիտությունը կարողացավ անմրապնդել իր միջազգային դիրքերը՝ խախտելով Ռուսաստանի մեկուսացման Նապոլեոնի պլանները: Հետևաբար, Նապոլեոնի հետ ընդհարումը Ռուսաստանի համար հանկարծակի չէր: Ալեքսանդրին նախապես հայտնի էին Նապոլեոնի հարձակման և՛ ժամանակը, և՛ տեղանքը, և՛ նրա զորքերի թվակազմը[25]:

Խորհրդային պատմագրությունը քաղաքական նկատառումներով որդեգրել է պատերազմի հանկարծակիության վարկածը: «Մեր գրականության մեջ, ներառյալ հանրագիտարանները և դասագրքերը,- գրում է Ն. Տրոիցկին,- Ա. Ի. Միխայլովսկի-Դանիլևսկու ժամանակներից ի վեր, ավելի քան 150 տարի և նրա թեթև ձեռքով գոյություն ունի «հայրենասիրական» այն վարկածը, որ Նապոլեոնը 1812 թ. Ռուսաստանի վրա հարձակվել է առանց պատերազմ հայտարարելու»[26]: Այնինչ արևմտյան պատմագրության ներկայացուցիչները (Ա. Ժոմինի, Կ. Կլաուզևից, Ի. Չենդլեր և Ժ. Տիրի) վաղուց հաստատել են, որ պատերազմի հայտարարման նապոլեոնյան նոտան նախօրոք ուղարկվել է Ռուսաստան և հաղորդվել բոլոր եվրոպական կաբինետներին[27]:

Իրականում, 1812 թ. հունիսի 10 (22)-ին Պետերբուրգում ֆրանսիական դեսպան Ժ. Լորիստոնի միջոցով Ռուսաստանի արտաքին գործոց նախարարության կառավարիչ Ա. Սալտիկովին հանձնվեց համապատասխան նոտան. «… իմ առաքելությունն ավարտվեց … քանզի իշխան Ա. Բ. Կուրակինի խնդրանքը՝ անձնագրերը նրան հանձնելու մասին, նշանակում է խզում (հարաբերությունների – Մ. Հ.). նորին կայսերական և թագավորական մեծությունը այս պահից սկսած իրեն համարում է Ռուսաստանի հետ պատերազմական

[24] Նույն տեղում:

[25] Նույն տեղում, էջ 48-50:

[26] **Троицкий Н. А.,** *История России в XIX веке, с. 37.*

[27] **Троицкий Н. А.**, *К истории нашествия Наполеона на Россию (объявление войны), (Новая и новейшая история, М., 1990, N 3, с. 216-218).*

իրավիճակում»[28]: Այդ հայտագրի տեքստը 1962 թ. հրապարակվել է Մոսկվայում[29], սակայն դրանից հետո էլ, արդեն 40 տարի է՝ պատմաբանները կեցվածք են ընդունում, որ այն չի եղել: Ն. Տրոիցկու վերոհիշյալ տեսակետը պաշտպանում է նաև Բ. Աբալիխինը:

Այսպիսով, 1812 թ. Ֆրանսիայի կողմից պատերազմ հայտարարելու փաստը հաստատվում է: Այնինչ, նախահեղափոխական և խորհրդային պատմագիտության կողմից այդ հանգամանքը լռության է մատնվում[30]: Միակ բացառությունը վարկածի ձևով արտահայտել է Դ. Բուտուրլինը, և 100 տարի անց առավել հստակ ձևակերպել է Ե. Տարլեն՝ գրելով, որ Նապոլեոնի՝ 1812 թ. հունիսի 10-ի կոչը, ուղղված «Մեծ բանակին», հենց պատերազմի հայտարարություն էր Ռուսաստանին, երբեք որևէ պատերազմի այլ հայտարարություն Նապոլեոնը չի կատարել»[31]: Այնինչ, իրականում այդ կոչը պատերազմի հայտարարություն չէր: Այն հասցեագրված էր ոչ թե Ռուսաստանի կառավարիչներին, այլ Ֆրանսիայի զինվորներին՝ նպատակ ունենալով նրանց առջև հիմնավորել պատերազմ սկսելը և բարձրացնել զինվորների բարոյական ոգին[32]:

Հանկարծակիության վարկածը սերտորեն առնչվում է այն խնդրին, թե արդյո՞ք Ռուսաստանը պատրաստ էր պատերազմին: Ռուսաստանի դեմ պատերազմի նախապատրաստվելով՝ Նապոլեոնը լավ գիտեր իր հակառակորդի թույլ կողմերը՝ ճորտատիրական իրավունքի ճնշող լուծը, դասային հակամարտությունները, դանդաղաշարժ բյուրոկրատական ապարատը և, վերջապես, ռեկրուտային զորահավաքների հետամնաց համակարգը, որը բանակը զրկում էր վարժեցված, կենսունակ պահեստայիններից: Հաշվի էր առնվում նաև XVIII դ. Ռուսաստանի բազմաթիվ պալատական հեղաշրջումների փորձը, այստեղից հետևեցնելով, որ իշխանությունը Պետերբուրգում անկայուն է: Պատրաստվելով պատերազմի՝ Նապոլեոնն օգտագործում էր եվրոպական ողջ մայրցամաքի նյութական ռեսուրսները, սակայն սխալ կլիներ գերագնահատել նապոլեոնյան կոալիցիայի ռազմատնտեսական հզորությունը, որի մեջ մտնող երկրներում, ինչպես նաև Ռուսաստանում, դեռևս արդյունաբերական հեղաշրջում չէր իրագործվել: Չնայած ճորտատիրական տնտեսության առկայությանը, այն դեռևս բավական կենսունակ էր, քանզի «XIX դ. սկզբին Ռուսաստանում

---

[28] *Նույն տեղում, էջ 217-218, Россия в XIX веке, с. 44.*

[29] *Внешняя политика России XIX и начала XX вв., Документы Российского министерства иностранных дел, серия I (1801-1815), т., 6, М., 1962, с. 756.*

[30] **Ахшарумов Д. И.,** *Описание войны 1812 г., СПб., 1819;* **Богданович И. М.**, *История Отечественной войны 1812 г. по достоверным источникам, т. I, СПб., 1859. Отечественная война и русское общество, т., 3, М., 1912;* **Манфред А. З.**, *Наполеон Бонапарт, М., 1980;* **Абалихин Б. С.,** *Героическая эпопея народного подвига, М., 1987;* **Сироткин В. Г.,** *Отечественная война 1812 г., М., 1988 и др.*

[31] **Тарле Е. В.**, *Соч., т. 7, М., 1959, с. 475.*

[32] *Новая и новейшая история, 1990, N 3, с. 217;* **Троицкий Н. А.,** *1812. Великий год России, М., 1988, с. 44.*

արտադրվում էր 160 հազ. տոննա չուգուն, իսկ Ֆրանսիայում՝ միայն դրա կեսը: Այդ իսկ պատճառով, 1812 թ. պատերազմի նախօրյակին Ռուսաստանն ուներ 1600 հրանոթ, իսկ Ֆրանսիան՝ 1400, ռուսական բանակում յուրաքանչյուր 1000 սվինին ընկնում էր 4, իսկ ֆրանսիականին՝ 2 հրանոթ: Ռուսաստանն ուներ հացահատիկի, մսի, բրդի հսկայական պաշարներ, ձիաբուծությունը Եվրոպայում ոչ մի տեղ այնքան զարգացած չէր, որքան Ռուսաստանում, ինչն ապահովում էր ռուսական հեծելազորի քանակական գերազանցությունը, այն շարժական զորքի միակ տեսակն էր»[33]:Բոլորովին այլ բան է, որ Ռուսաստանի այդ նյութական հսկայական ռեսուրսները տարածքի լայնածավալության, հաղորդակցության վատ ճանապարհների և մինչև 1837 թ. երկաթուղիների իսպառ բացակայության հետևանքով, ինչպես հարկն է չօգտագործվեցին: Այնուամենայնիվ, Նապոլեոնի բանակի մատակարարումը ևս լուրջ դժվարությունների հետ էր կապված: Այսպիսով, ռազմա-տնտեսական ներուժի տեսանկյունից Ռուսաստանը այնքան էլ չէր զիջում Ֆրանսիային, նրա կազմած կոալիցիան ինչ-որ տեղ նույնիսկ գերազանցում էր հակառակորդին, թեև թիկունքի կազմակերպման ու բանակի մատակարարման գործում թույլ էր նախապատրաստված:

Պատերազմի սկզբին ուժերի հարաբերակցության վերաբերյալ նոր տվյալները ևս վկայում են, որ Ռուսաստանը ոչ միայն պատրաստ, այլև քաջատեղյակ է եղել հակառակորդի ռազմավարական մտահղացումներին: Սահմանի ողջ երկայնքով ռուսական բանակների ցրվածությունը հետևանք էր ոչ այնքան տեղեկատվության բացակայության, գլխավոր հարվածի ուղղության ճշգրտման, որքան զորադասավորման համար ավելի շատ նահանգների ընդգրկման, որպեսզի դրանց բնակչության հաշվին լուծեին բանակի կերակրման խնդիրը[34] :

Պատերազմի սկզբին Ռուսաստանը Նապոլեոնի 448 հազարանոց բանակին կարող էր հակադրել 317 հազ. զինվոր, որոնք բաժանված էին երեք բանակների և օժանդակ զորամիավորումների: Ռուսական զորքերի թվաքանակը գրականության մեջ (ներառյալ նաև խորհրդայինը) մատնանշված է զարմանալի տարբերությամբ: Այնուհանդերձ, Ա. Արակչեևի դիվանում Ալեքսանդր Ի-ի վերաբերյալ նյութերում պահպանվում են պատերազմի սկզբին 1-ին և 2-րդ բանակների թվակազմի վերաբերյալ տեղեկագրերի բնագրերը, իսկ 3-րդ բանակի և պահեստային կորպուսների թվակազմի մասին իրական տեղեկագրերը հրապարակվել են ավելի վաղ, շուրջ 100 տարի առաջ, սակայն առ այսօր դրանք նույնիսկ արդի ռուսական պատմաբանների ուշադրությունից են դուրս մնացել: Համաձայն այդ տեղեկությունների, 1-ին բանակն ուներ 120.210, 2-րդ բանակը՝ 49.423, 3-րդ բանակը՝ 44.180 զինվոր: Բացի վերոնշյալից, 1-ին գծում կանգնած էր Ի. Էսսենի կորպուսը (38.077 զինվոր), պաշտպանության 2-րդ գիծը կազմում էին Ե. Մելլեր-Զակոմելսկու (27.473 զինվոր) և Ֆ. Էրտելի (37.589 զինվոր) պահեստային

---

[33] *История СССР С древнейших врем, н до наших дней, т. 4, М., 1967, с. 116.*

[34] **Тотфалушин В. П.,** *М. Б. Барклай де Толли в Отечественной войне 1812 года, М., 1991, с. 28-29.*

կորպուսները, իսկ թևերը պահպանում էին. հյուսիսում՝ Ֆ. Շտեյնգելի (19 հազ.) կորպուսը, հարավում՝ Պ. Չիչագովի Դանուբյան բանակը (57.526 զինվոր)[35]: Հարկ է նկատել, որ պատերազմի սկզբին Պ. Վիտգենշտեյնի կորպուսի (25 հազ.) մասին խոսք լինել չէր կարող: Այն Բարկլայ դե Տոլլիի կողմից ստեղծվեց ավելի ուշ՝ 1812 թ. հուլիսի 5-ին, Պոլոցկ-Վիտեբսկ նահանջի ճանապարհին՝ Պետերբուրգի անվտանգությունը ապահովելու համար[36]:

Ռուսական բանակի թվակազմի վերաբերյալ վերոնշյալ թվական տվյալների համադրումից պարզվում է, որ պատերազմի սկզբին Նապոլեոնի 448 հազարանոց բանակի դիմաց Ռուսաստանը կարողացել է կենտրոնացնել մոտ 393,5 հազ. զինվոր: Ն. Տրոիցկին, չգիտես ինչու, այդ թիվը ներկայացնում է 317 հազար՝ պատճառաբանելով, որ պատերազմի սկզբին Դանուբյան բանակը և Շտեյնգելի կորպուսը անգործության են մատնված եղել[37]: Պատերազմական իրադրության պայմաններում «անգործության» գործոնը էական նշանակություն ունենալ չէր կարող, քանզի հակառակորդը ևս ստիպված է եղել որոշակի ուժեր կենտրոնացնել այդ զորամիավորումների դեմ: Այսպիսով, կողմերի ուժերի հարաբերակցության տարբերությունը կազմում է ընդամենը 54,5 հազար: Հետևաբար, խորհրդային պատմաբանների մեծամասնության այն պնդումը, թե հարձակման տեղանքում ռուսները ֆրանսիացիներին զիջել են երեք կամ 1,5 անգամ, մեղմ ասած, իրականությանը չի համապատասխանում:

Ճշմարտությանն անհամեմատ ավելի մոտ է կանգնած եղել Մ. Պոկրովսկին՝ մատնանշելով, որ Նապոլեոնը Ալեքսանդրից վատ չէր կարողանում չափազանցնել իր բանակի չափերը: Տարբերությունն այն է, որ նման քայլով նա խաբում էր ոչ թե իրեն և իր դաշնակիցներին, այլ՝ հակառակորդներին: Ռուսական հայրենասիրությունը հաճույքով կրկնում էր այդ երևակայական մեծությունը՝ չափազանցնելով իր հաղթանակները պարտված թշնամիների քանակով: Նույնիսկ ռուսական լուրջ պատմաբանները հակված էին ընդունելու, որ նապոլեոնյան բանակը հասնում էր 640 հազարի: Իրականում այն կազմում էր 37.343 հազ. մարդ (չհաշված պրուսական և ավստրիական օժանդակ կորպուսները, որոնց օգնությունը չափազանց փոքր էր): Բանակի իրական կազմը սովորաբար 10 %-ով ավելի ցածր է, քան ցուցակագրված անձնակազմը, և հազիվ թե Նապոլեոնը 1812 թ. նվազեցներ իր ուժերը (հետագայում նա Սուրբ Հեղինե կղզում դաշնակիցների հետ միասին հաստատեց 400 հազ. թվակազմը)[38]: Այնուհանդերձ, արևմտյան սահմանում ռուսական բանակի թվակազմի նվազեցման հարցում նկատելի է Մ. Պոկրովսկու միտումը. «ընդհանուր առմամբ 280 հազար, իսկ առանց պահեստա-

[35] **Троицкий Н. А.,** *История России в XIX веке, с. 34.*

[36] **Троицкий Н. А.,** *1812. Великий год России, с. 96.*

[37] **Троицкий Н. А.,** *История России в XIX веке, с. 34.*

[38] **Покровский М. Н.,** *Внешняя политика России в первые десятилетия XIX века (История России в XIX веке. Дореформенная Россия, гл. XII, М., 2001, с. 525*).

յինների և կայազորների՝ 200 հազար»[39], հաշվի չառնելով թևային զորամիավորումները և 1-ին, 2-րդ գծերում գործող կորպուսները:

Գլխավոր հարվածի ուղղության վերաբերյալ Նապոլեոնի՝ «Եթե վերցնեմ Կիևը, ես Ռուսաստանը կբռնեմ ոտքերից, եթե վերցնեմ Պետերբուրգը, ես նրան կբռնեմ գլխից, գրավելով Մոսկվան՝ ես նրան կխոցեմ սրտից» հայտարարությունը, Ն. Կինյապինան իրավացիորեն համարում է անհեթեթություն, քանզի Նապոլեոնի նման զորավարը դժվար թե հակառակորդին նախապես տեղյակ պահեր իր ռազմավարական պլանների մասին[40]: Ավելացնենք նաև, որ այդ հայտարարությունն աղբյուրագիտական հենքով չի հիմնավորվում. այն առաջին անգամ շրջանառության մեջ է դրել ֆրանսիացի հեղինակ Վ. Դունդուլիսը[41]: Այդ առնչությամբ արդի ռուսական պատմագիտությունը շարունակում է հովվերգական վերաբերմունք ցուցաբերել:

Վերջապես, լուրջ տարակարծություններ կան նապոլեոնյան բանակի անվանման՝ «La Grande *Armée*», ռուսերեն թարգմանությամբ՝ «Великая армия», «Մեծ բանակ» հարցի շուրջ: Իրոք, Նապոլեոնը Ռուսաստանի դեմ պատերազմի համար նախապատրաստել էր պատերազմների պատմության մեջ իր քանակով չտեսնված բանակ, այսպես կոչված «La Grande Armée»: Խորհրդային պատմաբաններն այդ անվանումը թարգմանում են տարբեր կերպ. ոմանք (Ե. Տարլե, Ա. Մանֆրեդ, Պ. Ժիլին)՝ որպես «Великая армия», մյուսները (Մ. Պոկրովսկի, Ս. Օկուն, Լ. Բեսկրովնի)՝ որպես «Большая армия»: Ֆրանսիական աղբյուրները վկայում են, որ Նապոլեոնի «La Grande Armée» անվանումը ծնունդ է առել դեռևս 1805 թ., այն ժամանակ այդպես են անվանել՝ նկատի ունենալով բանակի զորակազմի արտակարգ նշանակությունը, որը Նապոլեոնը կենտրոնացրել էր Բուլոնի ճամբարում: Հետևաբար, նշում է Ն. Տրոիցկին, □La Grande Armee» արտահայտությունը, ըստ էության, նշանակում է «Великая армия□, այլ ոչ թե ուղղակի «Большая»[42]: Հարկ է նկատել, որ վերոհիշյալ հարցադրմանն առաջինը անդրադարձել է Մ. Պոկրովսկին՝ գտնելով, որ «Великая армия» արտահայտությունը սխալ թարգմանության արդյունք է[43]: Հերքելով նմանօրինակ մոտեցումները, մեր կարծիքով, Նապոլեոնի «La Grande Armée» ֆրանսիական արտահայտությանը համարժեք հոմանիշ բառակապակցություններից (մեծ, ստվար, հսկայական, վիթխարի, բազմամարդ, գլխավոր) առավել նախընտրելի է

---

[39] Նույն տեղում:

[40] **Киняпина Н. С.**, *Внешняя политика России первой половины XIX века, М., 1963, с. 65.*

[41] **Dundulis B.,** *Napoleon et la Lituanie en 1812, Paris, 1940, p. 89. 1940, п»°л,* **Троицкий Н. А.,** *1812. Великий год России, с. 320.*

[42] **Троицкий Н. А.,** *1812. Великий год России, с. 53.*

[43] *История России в XIX веке. См. гл. XII;* **Покровский М. Н.,** *Внешняя политика России в первые десятилетия XIX века, М., 2001, с. 527.*

«գլխավորը», որը բովանդակային առումով ներառում է թե՛ (великая) և թե՛ (большая) հասկացությունները[44]:

Իրոք, 1805 թ. և հետագա ժամանակաշրջանում այն ունեցել է «Գլխավոր բանակի» իմաստ: Այդ անվանման շուրջ տարակարծությունները ոչ այլ ինչ են, քան ինչ-որ բան մոգոնելու ցանկություն, նշված արտահայտություններին քաղաքական ինչողություն հաղորդելու հետևանք, որը խորթ չէ ռուսական պատմագիտությանը:

ВЕРСИЯ О ВНЕЗАПНОСТИ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ 1812 ГОДА

МАЛХАСЯН Г. Т., АКОПЯН С. С.

Резюме

На основании новейших публикаций освещается версия о внезапности войны и о неподготовленности России к ней, в том числе и некоторые вопросы, связанные с темой: почему война была названа Отечественной, являлась ли Россия сторонником коллективной безопасности в Европе, разработанный Россией военный проект „упреждающего” удара по Франции до начала войны, новые данные о соотношении сил в начале войны, разногласия по вопросу направления главного удара и названия наполеоновской армии – „La Grande Armйe” и т. д.

[44] *Le petit Larousse, P., 1996, p. 491, Le nouveau Petit Robert. Nouvelle e'dition du Petit Robert de Paul Robert, Paris, 1996, p. 1039.*